ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2007Թ. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2007 թվականի ընթացքում դատարանների նախագահների խորհրդի և արդարադատության խորհրդի կողմից ընդունված որոշումների մասին վիճակագրական տվյալներ

2007 թվականի ընթացքում ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը կայացրել է 58 որոշում, որից 18-ը՝ նորմատիվ, 29-ը՝ լոկալ, 11-ը՝ անհատական: ՀՀ դատարանների նախագահների խորհուրդի էթիկայի հանձնաժողովը ստացել է 13 դիմում: Քննված գործերից 8-ում խախտումներ չեն հայտնաբերվել, 1 դիմում քննության չի առնվել՝ կարգապահական վարույթ հարուցված լինելու պատճառով, 2 գործով արձանագրվել են խախտումներ, որոնց քննարկման արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ: ՀՀ դատարանների նախագահների խորհուրդի ուսումնական հանձնաժողովը 2007 թվականին կայացրել մեկ որոշում «Դատավորների վերապատրաստման ուղենիշները հաստատելու մասին»:

Արդարադատության խորհուրդը 2007 թվականի ընթացքում տվել է 42 եզրակացություն և կայացրել է 37 որոշում, որոնցից 10 որոշում՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և 7 որոշում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին գործը կարճելու մասին:

2007 թվականի ընթացքում ՀՀ դատարաններում գործերի քննության վիճակագրական տվյալներ.

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

2007 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններ մուտք է եղել 3201 քրեական գործ, 69-ը հանձնվել է ըստ ընդդատության: 2604-ը քննվել է ըստ էության և կայացվել է դատավճիռ (այդ թվում՝ 165-ն անչափահասների նկատմամբ), 146-ը կարճվել է (այդ թվում՝ 6-ն անչափահասների նկատմամբ), 47-ով անմեղսունակների նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 13-ն ուղարկվել է լրացուցիչ նախաքննության: 323 գործ (այդ թվում՝ 4-ն անչափահասների նկատմամբ) փոխանցվել է 2008 թվական:

Համեմատության կարգով նշենք, որ 2006 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններ մուտք է եղել 3940 քրեական գործ, որոնցից 3041-ը քննվել է ըստ էության և կայացվել դատավճիռ (այդ թվում՝ 148-ը անչափահասների նկատմամբ), 285-ը կարճվել է (այդ թվում՝ 10-ն անչափահասների նկատմամբ):

2007 թվականի ընթացքում դատապարտվել է 3520 մարդ (այդ թվում՝ 228 անչափահաս), 536 անձանց (այդ թվում՝ 11 անչափահաս) նկատմամբ գործերը կարճվել են, 44 անմեղսունակ անձանց նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, 17-ի վերաբերյալ գործերը հանձնվել են լրացուցիչ նախաքննության, 10 անձ արդարացվել է, որոնցից 4 անձ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում, 1 անձ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում, 2 անձ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանում, 1 անձ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում, 1 անձ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանում, 1 անձ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանում:

Այսպիսով, քննվել և դատավճռի (որոշման) կայացմամբ ավարտվել է 2604 քրեական գործ, որոնցով դատապարտվել է 3520 և արդարացվել՝ 10 անձ:


Նշենք, որ 2006թ. ընթացքում հանրապետությունում դատապարտվել է 3805 մարդ, իսկ արդարացվածների թիվը կազմել է 4՝ Երևանում՝ 3 և մարզերում՝ 1:

ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից քննվել է 9829 միջնորդություն (այդ թվում՝ 81 գրավի /62-ը բավարարվել է, 18-ը՝ մերժվել, 1-ը թողնվել է առանց քննության), որոնցից 9570-ը բավարարվել է, իսկ 252-ը՝ մերժվել, 7-ը թողնվել է առանց քննության։

Առաջին ատյանի դատարանների 2604 դատավճիռների դեմ ՀՀ քրեական վերաքննիչ դատարան բերվել է 667 (25,6%) վերաքննիչ բողոք, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ 83 (3,2%) վճռաբեկ բողոք։

1854 (71,2%) (2604-(667+83)) դատավճիռ (որոշում) չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ։

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դիտավորյալ սպանության համար դատապարտվել է 71 մարդ, որը 2-ով ավել է նույն ժամանակահատվածում 2006թ-ին դատապարտված անձանց թվից։ Կաշառակերության, կաշառատվության, կաշառատվության միջնորդության համար դատապարտվել է 11 մարդ, որը 6-ով ավել է 2006թ-ի տվյալից։ Սակայն ընդհանուր առմամբ 2007թ-ին դատարան մուտք եղած քրեական գործերի քանակը և դատապարտյալների թիվը 2006թ-ի համեմատությամբ նվազել է, իսկ արդարացվածների թիվը՝ ավելացել։



2.ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ


ՀՀ քրեական վերաքննիչ դատարան մուտք է եղել 667 գործ, որոնցից 439-ով (65,8%) կայացվել է դատավճիռ, 26-ով (3,8%) գործի վարույթը կարճվել է, 152-ը (22,7%) թողնվել է առանց քննության, 2-ն (0,2%) ուղարկվել է լրացուցիչ նախաքննության, 8 (1,2%) առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու կամ այլ որոշումներ բեկանվել և ուղարկվել են նոր դատաքննության: 40 (6%) գործ փոխանցվել է 2008 թվական:

Ընդհանուր առմամբ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված է 439 դատավճիռներից առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատավճիռների համեմատ նույնաբովանդակ է 192 (43,7%) վճիռ, ամբողջությամբ այլ բովանդակությամբ՝ 11 (2,5%), մասնակի այլ բովանդակությամբ՝ 236 (53,8%) դատավճիռ: Այսինքն, վերաքննիչ քրեական դատարանը փոփոխել է առաջին ատյանի դատարանի կայացրած 247 (11+236) դատավճիռ:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կայացրած 439 դատավճիռների դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ բերվել է 140 (31,9%) բողոք:

Փաստորեն, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կայացրած 439 դատավճիռներից (որոշումներից) 299-ը (439-140) (68,2%) չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Համեմատության կարգով նշենք, որ 2006 թվականին ՀՀ քրեական վերաքննիչ դատարան մուտք է եղել 710 գործ, որոնցից 450-ով (63,3%) կայացվել է դատավճիռ, 29-ով (4%) գործի վարույթը կարճվել է, 152-ը (21,4%) թողնվել է առանց քննության, 29-ն (4%) ուղարկվել է լրացուցիչ նախաքննության, 3 (0,4%) առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու կամ այլ որոշումներ բեկանվել և ուղարկվել են նոր դատաքննության, 47 (6,6%) գործ փոխանցվել է 2007 թվական:




3. ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ մուտք է եղել 229 վճռաբեկ բողոք, իսկ 4-ը փոխանցվել է 2008թ.: Քննության է առնվել 225 վճռաբեկ բողոք, 121-ով վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում է կայացվել, 12-ով բողոքը հետ է վերցվել: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից վարույթ ընդունված վճռաբեկ բողոքներից 8-ը (3,8%) մերժվել է, 52(24,4%) վճռաբեկ բողոք բավարարվել է՝ վճիռը բեկանվել է, 32 բողոք թողնվել է առանց քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ մուտք եղած բողոքներից 36-ը բերվել է ՀՀ առաջին ատյանի դատարանների դատավճիռների, իսկ 140-ը՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավճիռների դեմ, 47-ը՝ ՀՀ առաջին ատյանի և ՀՀ քրեական վերաքննիչ դատարանների դատավճիռների դեմ:

Համեմատության կարգով նշենք, որ 2006 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ մուտք է արվել 352 վճռաբեկ բողոք, որոնցից 5-ը նշված ժամանակահատվածում քննության չի առնվել և փոխանցվել է 2007թ.: Քրեական պալատի կողմից քննության առնված 347 գործերի /նյութերի/ վերաբերյալ արձակած դատավճիռներից անփոփոխ է մնացել 84-ը, բեկանվել՝ 74-ը: Մնացած 189 բողոքներից 19-ը քննության չի առնվել՝ բողոք բերած անձանց կողմից դրանք հետ վերցնելու պատճառով, 6 բողոքի պատասխանվել է գրությամբ: 70 բողոք թողնվել է առանց քննության: 91 բողոք հետ է վերադարձվել, 3 բողոք մնացել է անփոփոխ / կիրառվել է համաներում և պատժի կրումից ազատում/:



ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) առաջին ատյանի դատարանների կայացրած դատավճիռների կայունությունը

ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից քրեական գործերով կայացրած 2604 դատավճիռներից ՀՀ քրեական վերաքննիչ դատարան բողոդոքարկվել է 667 (25,6%) դատավճիռ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված է 439 վճիռներից առաջին ատյանի դատարանների կողմից կայացված վճիռների համեմատ նույնաբովանդակ է 192 (43,7%) վճիռ, ամբողջությամբ այլ բովանդակությամբ՝ 11 (2,5%), մասնակի այլ բովանդակությամբ՝ 236 (53,8%) վճիռ: Այսինքն, վերաքննիչ քրեական դատարանը փոփոխել է առաջին ատյանի դատարանի կայացրած 247 (11+236) (37%) վճիռ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացրած 36 դատավճիռ, որից 10-ով կայացվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում, 4-ով բողոքը հետ է վերցվել: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքներից 14-ով բեկանվել է, 2 բողոք թողնվել է առանց քննության, 5 բողոք մերժվել է: Այսինքն, պալատը բեկանել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացրած 14 վճիռ:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանների կայացրած 2604 վճիռներից բողոքարկվել է 703 (667+36), որը կազմում է կայացրած վճիռների 27%, որից փոփոխվել կամ բեկանվել է 261-ը (247+14), որը կազմում է բողոքարկված վճիռների 37,1%, այսինքն՝ առաջին ատյանի դատարանների բողոքարկված վճիռներից անփոփոխ են մնացել 442-ը (703-261), որը կազմում է բողոքարկված վճիռների 62,9%: Վերոնշյալ վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի դատարանների՝ քրեական գործերով կայացրած վճիռներից, ընդհանուր առմամբ, անփոփոխ է մնացել 2343 վճիռ (2604-261), որը կազմում է առաջին ատյանի դատարանների կայացրած վճիռների 90%:

բ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կայացրած դատավճիռների կայունությունը

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կայացրած 439 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ բողոքարկվել է 187-ը: Պալատի կողմից քննված 175 գործերից 37-ով վճիռները բեկանվել են, 102 բողոք վերադարձվել է, 27-ը թողնվել է առանց քննության: Այսպիսով, պալատը բեկանել է 37 վճիռ, որը կազմում է պալատ բողոքարկված վճիռների

19,8%, ուստի բողոքարկված վճիռներից անփոփոխ է մնացել 150 (187-37) վճիռ, որն էլ կազմում է բողոքարկված վճիռների 80,2%-ը: Ընդհանուր առմամբ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վճիռներից անփոփոխ է մնացել 402(439-37) վճիռ, որը կազմում է 91,6%:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ՀՀ դատական համակարգի դատարանների կողմից կայացված 3043 (2604+439) դատավճիռներից վերադաս ատյան բողոքարկվել է 890-ը (29,2%) (667+36+187): 2007թ-ին բեկանված վճիռների թիվը կազմում է 325 (274+14+37), որը կազմում է բողոքարկված դատավճիռների 36,5%, իսկ բողոքարկված դատավճիռներից անփոփոխ է մնացել 565-ը (890-325), որն էլ կազմում է 63,5%: Ընդհանուր առմամբ, ՀՀ դատարանների կողմից կայացված դատավճիռներից անփոփոխ է մնացել 2718 (3043-325) դատավճիռ, որը կազմում է 89,3%:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ


1. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՀՀ առաջին ատյանի դատարաններ 2007 թվականի ընթացքում մուտք է եղել 41994 քաղաքացիական գործ, որից 1194-ը հանձնվել է այլ դատարաններ, 7000-ը՝ փոխանցվել 2008 թվական: 28776-ով (68,5%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ 20887-ը հայցի բավարարմամբ, 3515-ով գործը կարճվել է: 5024 հայց թողնվել է առանց քննության:

Համեմատության կարգով նշենք, որ 2006 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններ մուտք է եղել 49389 գործ, որոնցով կայացվել է 38641(78,2%) վճիռ, այդ թվում՝ 29951-ը հայցի բավարարմամբ, իսկ 3454-ով գործը կարճվել է:

2007 թվականին 2006-ի համեմատ բավականին նվազել է ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ հայցերի թիվը. 2006-ին եղել է 132, իսկ 2007-ին՝ 56: Նվազել է նաև վարչաիրավական հարաբերություններից առաջացած հայցերի թիվը՝ 7225-ից հասնելով 5348-ի: 2007թ-ին աճել է սնանկության մասին հայցերի թիվը՝ 489-ից հասնելով 1042-ի:

Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների կողմից կայացված 28776 վճիռների դեմ բերվել է 3554 վերաքննիչ բողոք և 268 վճռաբեկ բողոք: Փաստորեն, 24954 (86,7%) վճիռներ չեն բողոքարկվել և մտել են օրինական ուժի մեջ:



A – մուտք են եղել քաղաքացիական գործեր

B – կայացվել են վճիռներ

C – բավարարվել են

2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ


ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան մուտք է եղել 4801 գործ, որից 145 բողոք վերադարձվել է: Վարույթ է ընդունվել 4656-ը: 3554 (86,7%) գործով կայացվել է վճիռ, այդ թվում 186-ով՝ կարճման: 915-ը թողնվել է առանց քննության: 1102-ը փոխանցվել է 2008 թվական:

Առաջին ատյանի դատարանների կողմից կայացված վճիռների համեմատ նույնաբովանդակ են վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2420 վճիռ, ամբողջությամբ այլ բովանդակությամբ՝ 804, մասնակի այլ բովանդակությամբ՝ 330 վճիռ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած 3554 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել է 1115-ը (31,4%): 2439 (68,6%) վճիռ չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:

Համեմատության կարգով նշենք, որ 2006 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան մուտք է եղել 4574 գործ, որից 245 բողոք վերադարձվել է, վարույթ է ընդունվել 4329-ը: 2210 գործով կայացվել է վճիռ կամ որոշում, այդ թվում 118-ով՝ կարճման, 1339 բողոք թողնվել է առանց քննության, 780-ը փոխանցվել է 2007 թվական:

Առաջին ատյանի դատարանների կողմից կայացված վճիռների համեմատ նույնաբովանդակ են քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2601 վճիռ, ամբողջությամբ այլ բովանդակությամբ՝ 605, մասնակի այլ բովանդակությամբ՝ 343 վճիռ:




3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ տնտեսական դատարան մուտք է եղել 6974 գործ, որոնցից 12 գործ ուղարկվել է ըստ ընդդատության: 3143-ով (45,1%) կայացվել է վճիռ, այդ թվում՝ 1980-ը հայցի բավարարմամբ, 385-ով գործը կարճվել է: 500 հայց թողնվել է առանց քննության: 3319-ը փոխանցվել է 2008 թվական

ՀՀ տնտեսական դատարանի կայացրած 3143 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել է 543-ը (17,3%): Այսպիսով, 2600 (82,7%) վճիռ չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ:

Նույն ժամանակահատվածում 2006թ-ին ՀՀ տնտեսական դատարան մուտք է եղել 6337 քաղաքացիական գործ, որոնցից 2771-ով կայացվել է վճիռ, այդ թվում՝ 2412-ը հայցի բավարարմամբ, 347-ով գործը կարճվել է: 632 հայց թողնվել է առանց քննության, 11 գործ ուղարկվել է ըստ ընդդատության, 2575-ը փոխանցվել է 2007 թվական:



4. ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ մուտք է եղել 2095 վճռաբեկ բողոք, որից 115 վճռաբեկ բողոք (5,5%) փոխանցվել է 2008 թվական: Քննված 1980 վճռաբեկ բողոքներից 1515-ով (76,5%) կայացվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում, 19-ով՝ վճռաբեկ բողոքը (1%) հետ վերցնելու մասին:


Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ է ընդունվել 446 (22,5%) վճռաբեկ բողոք, որից 67-ով (15%) կայացվել է վճռաբեկ բողոքը մերժելու մասին որոշում, 379-ով (85%)՝ վճռաբեկ բողոքը բավարարվելու մասին որոշում:

379 բավարարված վճռաբեկ բողոքներից (այդ թվում՝ մասնակի) 196-ով (51,7%) վճիռը բեկանվել է ամբողջությամբ, 44-ով (11,6%) ՝ վճիռը բեկանվել է մասնակի, 35 (9,2%) վճիռ բեկանվել և փոփոխվել է, 21 (5,5%) վճիռ բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճռին, 21-ով (5,5%) գործի վարույթը կարճվել է, 11-ով (2,9%) հայցը կամ դիմումը թողնվել է առանց քննության, 51 (13,5%) որոշում (վերացվել) վերանայվել է,:

Քննված վճռաբեկ բողոքներից 268-ը (12,8%) բերվել են առաջին ատյանի դատարանի, 1115-ը (53,2%)՝ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի, 543-ը (26%)՝ ՀՀ տնտեսական դատարանի, 8-ը (0,4%)՝ ժող. դատարանների վճիռների և որոշումների դեմ:

Համեմատության կարգով նշենք, որ 2006 թվականի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական գործերի
պալատ մուտք է եղել 1805 բողոք, որոնցից 1623-ով (89,9%) կայացվել է որոշում, 182 բողոք (10%) հետ է վերցվել, իսկ թվով 45 բողոք (2,4%) փոխանցվել է 2007 թվական:

1623 վճռաբեկ բողոքներից 662-ը (40,8%) բավարարվել է, այդ թվում 596-ը (36,7%) բավարարվել է ամբողջությամբ, 66-ը (4%) բավարարվել է մասնակի, 934-ը (57,5%) թողնվել է առանց բավարարման, 27-ով (1,7%) գործի վարույթը կարճվել է:



ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) առաջին ատյանի դատարանների կայացրած վճիռների կայունությունը

Վիճակագրական տվյալների համաձայն՝ առաջին ատյանի դատարանները կայացրել են 28776 վճիռ:

ՀՀ առաջին ատյանի դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացված 28776 վճիռներից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան բողոքարկվել է 4801-ը (16,7%): ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված է 3554 վճիռներից առաջին ատյանի դատարանների կայացրած վճիռների համեմատ նույնաբովանդակ է 2420 (68,1%) վճիռ, ամբողջությամբ այլ բովանդակությամբ՝ 804 (22,6%), մասնակի այլ բովանդակությամբ՝ 330 (9,3%) վճիռ: Այսինքն, վերաքննիչ քաղաքացիական դատարանը փոփոխել է առաջին ատյանի դատարանի կայացրած 1134 (804+330) վճիռ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանի կայացրած 268 վճիռ և որոշում, 175-ը վերադարձվել է, 4-ով կայացվել է բողոքը հետ վերցնելու վերաբերյալ որոշում: Վարույթ ընդունված 89 վճռաբեկ բողոքներից, 87-ը բավարարվել է (այդ թվում մասնակի), 2-ը մերժվել:

Բավարարված վճռաբեկ բողոքներից 40-ով վճիռը բեկանվել է ամբողջությամբ, 1-ով՝ մասնակի, 1 վճիռ բեկանվել է և փոփոխվել է, 9-ով գործի վարույթը կարճվել է, 11 վճիռ բեկանվել է և հայցը /դիմումը/ թողնվել է առանց քննության, 25 որոշում վերացվել է: Այսինքն, պալատը բեկանել է առաջին ատյանի կայացրած 87 (40+1+1+9+11+25) վճիռ և որոշում:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանների կայացրած 28776 վճիռներից բողոքարկվել է 5069 (4801+268), որը կազմում է կայացրած վճիռների 17,6%, որից փոփոխվել կամ բեկանվել է 1221-ը (1134+87), որը կազմում է բողոքարկված վճիռների 24%, այսինքն՝ առաջին ատյանի դատարանների բողոքարկված վճիռներից անփոփոխ են մնացել 3848-ը (5069-1221), որը կազմում է 76%: Վերոնշյալ վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի դատարանների՝ քաղաքացիական գործերով կայացրած վճիռներից, ընդհանուր առմամբ, անփոփոխ են մնացել 27555-ը (28776-1221), որը կազմում է 95,8%:

բ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած վճիռների կայունությունը

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած 3554 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել է 1115-ը (31,4%)։ Պալատի կողմից քննված 1115 վճռաբեկ բողոքներից 904-ը (81,1%) վերադարձվել է, 5-ով կայացվել է վճռաբեկ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ որոշում։ Վարույթ ընդունված 206 (18,5%) վճռաբեկ բողոքներից, 11-ը մերժվել է, 195-ը՝ բավարարվել։

Բավարարված վճռաբեկ բողոքներից 92-ով վճիռները բեկանվել են ամբողջությամբ, 29-ը՝ մասնակի, 21 վճիռ բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճռին, 28 վճիռ բեկանվել է և փոփոխվել է, 6-ով գործի վարույթը կարճվել է, 19 որոշում վերացվել է։ Այսինքն՝ պալատը բեկանել է 195 (92+29+21+28+6+19) վճիռ, որը կազմում է պալատ բողոքարկված վճիռների 17,5%ը, ուստի բողոքարկված վճիռներից անփոփոխ է մնացել 920-ը, որն էլ կազմում է բողոքարկված վճիռների 82,5%-ը Այսպիսով, ընդհանուր առմամբ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած վճիռներից անփոփոխ է մնացել 3384 (3554-195) վճիռ, որը կազմում է 95,2%։

գ) ՀՀ տնտեսական դատարանի կայացրած վճիռների կայունությունը

ՀՀ տնտեսական դատարանի կայացրած 3143 վճիռներից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ բողոքարկվել է 543-ը, որից 421 (77,5%) վճռաբեկ բողոք վերադարձվել է, 15-ը փոխանցվել է 2008 թվական։ Վարույթ ընդունված 107 (19,7%) վճռաբեկ բողոքներից 17-ը մերժվել են։ Բավարարված վճռաբեկ բողոքներից 64-ով վճիռները բեկանվել են ամբողջությամբ, 14-ը՝ մասնակի, 6 վճիռ բեկանվել է և փոփոխվել է, 6-ով գործի վարույթը կարճվել է։ Այսինքն՝ պալատը բեկանել է 90 վճիռ, որը կազմում է պալատ բողոքարկված վճիռների 16,6%ը, ուստի բողոքարկված վճիռներից անփոփոխ է մնացել 453 (543-90) վճիռ, որն էլ կազմում է բողոքարկված վճիռների 83,4%-ը։ Ընդհանուր առմամբ, ՀՀ տնտեսական դատարանի կայացրած վճիռներից անփոփոխ է մնացել 3053 (3143-90), որը կազմում է 97,1%։

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ՀՀ դատական համակարգի դատարանների կողմից կայացված 35473 (28776+3143+3554) վճիռներից վերադաս ատյան բողոքարկվել է 6727-ը (19%) (4801+268+1115+543)։ 2007թ-ին բեկանված վճիռների թիվը կազմում է 1506 (1134+87+195+90), որը կազմում է բողոքարկված վճիռների 22,4%, իսկ բողոքարկված վճիռներից անփոփոխ է մնացել 5221-ը, որն էլ կազմում է 77,6%։ Ընդհանուր առմամբ, ՀՀ դատարանների կողմից կայացված վճիռներից անփոփոխ է մնացել 33967 (35473-1506) վճիռ, որը կազմում է 95,7%։